ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Մարտունի **20-ը դեկտեմբերի 2024 թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

2024 թվականի դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի չորրորդ հերթական նիստը: Նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ: Բացակա էին՝ Հասմիկ Բաղդասարյանը, Օլգա Դավթյանը, Արարատ Խաչատրյանը, Նաղաշ Հակոբյանը, Սվետլանա Հարությունյանը, Մարինա Հովեյանը, Լիանա Հովհաննիսյանը, Սեդրակ Սահակյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին բնակավայրերի վարչական ղեկավարները և աշխատակազմի բաժինների պետերը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի յոթերորդ նստաշրջանի չորրորդ հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Աստղաձորի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Երանոսի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

4) 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին.

5) 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

6) 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար հավելավճարներ սահմանելու մասին.

7) 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

8) Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների (հողամասերի) սահմաններին կից Մարտունի համայնքի Արծվանիստ և Ներքին Գետաշեն բնակավայրերի բնակիչների կողմից իրենց հողամասերում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացմանը համաձայնություն տալու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բնակիչներին համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով շինություններ կառուցելու համաձայնություն տալու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 31-ի №74-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին.

11) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0332-0129 կադաստրային ծածկագրով 0.6004 հա մակերեսով հողամասն աճուրդային կարգով օտարելու համաձայնություն տալու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 12-րդ փողոց, թիվ 20 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-045-0055-0005

կադաստրային ծածկագրով 0.125 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասն աճուրդային կարգով օտարելու համաձայնություն տալու մասին.

13) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.

14) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերն աճուրդային կարգով օտարելու համաձայնություն տալու մասին.

15) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին.

16) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

17) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Գառնիկ Հակոբի Գրեյանի համար փոխադրամիջոցի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին.

18) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու անդամներին իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց փոխհատուցում կատարելու մասին.

19) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Լուսինե Վարդանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 186-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-12-րդ և 16-

րդ հոդվածների պահանջներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում (այսուհետ՝ համայնք) 2025 թվականի համար տեղական տուրքերը և դրանց դրույքաչափերը՝ համաձայն հավելված №1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում 2025 թվականի համար տեղական վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը՝ համաձայն հավելված №2-ի:
3. Համայնքային ենթակայության ուսումնական հաստատություններում ուսման և ծնողների կողմից կատարվող վճարներից հարյուր տոկոսով ազատել՝
   1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաներին.
   2) երկկողմանի ծնողազուրկ երեխաներին:
4. Համայնքային ենթակայության ուսումնական հաստատություններում ուսման և ծնողների կողմից կատարվող վճարներից հիսուն տոկոսով ազատել՝
   1) միակողմանի ծնողազուրկ երեխաներին.
   2) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող երեխաներին.
   3) հաշմանդամություն ունեցող երեխաներին.
   4) միևնույն ուսումնական հաստատություն նույն ընտանիքից երկու և ավելի երեխաներ հաճախելու դեպքում.
   5) Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և համայնքում բնակվող երեխաներին:
5. Սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվելու կիրառման իրավունքը համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում վերապահել համայնքի ղեկավարին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Քվեարկությանը չեն մասնակցել Արա Գասպարյանը, Մեխակ Հակոբյանը և Անդրանիկ Գրիգորյանը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 187-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՍՏՂԱՁՈՐԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների

մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Աստղաձորի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերություն:
2. Հաստատել «Աստղաձորի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Արա Գասպարյանը և Մեխակ Հակոբյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 188-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԱՆՈՍԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Երանոսի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 189-Ա/

Լսեցին

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 700000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 190-Ա/

Լսեցին

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2025 թվականի համար հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն հավելված №1-ի:
2. 2025 թվականի համար հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №2-ի:
3. Առաջարկել Մարտունի համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 191-Ա/

Լսեցին

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎԱՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար սահմանել հավելավճար 2025 թվականի համար՝ նրանց պաշտոնային դրույքաչափի 6 (վեց) տոկոսի չափով:
2. Համայնքային ծառայողին տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան շնորհելու դեպքում համայնքային ծառայողի համար հաշվարկվում է սույն որոշման 1-ին կետում նշված չափով հավելավճար՝ այդ իրավունքի ծագմանը հաջորդող ամսվա 1-ից:
3. Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) համայնքային ծառայության աշխատանքային ստաժի համար սահմանել հավելավճար 2025 թվականի համար՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Քվեարկությանը չի մասնակցել Հակոբ Վարդանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 192-Ա/

Լսեցին

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել 2025 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1-44 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Քվեարկությանը չի մասնակցել Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 193-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝
   1) Սուրեն Ալբերտի Առաքելյանի կողմից Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի 1-ին փողոց, 9-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած շինություններն օրինականացնելու համար.
   2) Արտյոմ Յուրայի Վարդանյանի կողմից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դուրան թաղամասի 5-րդ փողոց, թիվ 24 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.
   3) Արմեն Սոկրատի Գասպարյանի կողմից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վանքի թաղամասի 1-ին փողոց, թիվ 17 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին

կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը և Հակոբ Բարոյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 194-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՍԱՀՄԱՆԻՆ ԿԻՑ՝ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

   1) Սուսաննա Գլաստոնի Աբրոյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Վարդենիկ բնակավայրի 30-րդ փողոց, թիվ 27 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել բնակելի տուն.

   2) Արտյոմ Արթուրի Դավեյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ներքին Գետաշեն բնակավայրի Գետափնյա թաղամասի 2-րդ փողոց, թիվ 11 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել նկուղային մասով ավտոտնակ-մառան.

   3) Ահարոն Բաբկենի Դավեյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ջոլաքար բնակավայրի 24-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 11-13 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել հացատուն և անասնաշենք.

   4) Ջիվան Վարազդատի Մանուկյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից՝ ճանապարհի սահմանագծով, իր՝ Ծովասար բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 60 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցել երկհարկանի բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը և Հակոբ Բարոյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 195-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի №74-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու մասին» №74-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝ որոշման հավելվածի 4-րդ կետը «եզրակացության և» բառերից հետո լրացնել «(կամ)» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 196-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՒԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-034-0332-0129 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.6004 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0332-0129 կադաստրային ծածկագրով 0.6004 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ այլ հողատեսք) օտարել աճուրդային կարգով:
2. Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանել 456000 (չորս հարյուր հիսունվեց հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսը՝ 22800 (քսաներկու հազար ութ հարյուր) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը, Պապ Դանիելյանը, Լուսինե Վարդանյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 197-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-045-0055-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.125 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 12-րդ փողոց, թիվ 20 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-045-0055-0005 կադաստրային ծածկագրով 0.125 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման) օտարել աճուրդային կարգով:
2. Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանել 990000 (ինը հարյուր իննսուն հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսը՝ 49500 (քառասունինը հազար հինգ հարյուր) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը, Պապ Դանիելյանը, Լուսինե Վարդանյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 198-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 05-016-0137-0040 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.5375 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՄՈ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի №1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 25-ի №2/փ-453 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 05-016-0137-0040 կադաստրային ծածկագրով 1.5375 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր գործառնական նշանակությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը, Պապ Դանիելյանը, Լուսինե Վարդանյանը և Տարոն Արշակյանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 199-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերն օտարել աճուրդային կարգով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 200-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողերը մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը և Վահագն Դավթյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 201-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու և փորձաքննություն անցկացնելու դիմաց վճարումներ կատարելու նպատակով Մարտունի համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից 46860.0 հազար դրամ հատկացնել համայնքի բյուջեի ֆոնդային մաս և բաշխել հետևյալ ոլորտներին՝

ա. «Փողոցների լուսավորում» նախահաշվի 5134 հոդվածին՝ 4800,0 հազար դրամ,

բ. «Ջրամատակարարում և ջրահեռացում» նախահաշվի 5134 հոդվածին՝ 6260,0 հազար դրամ,

գ. «Բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն» նախահաշվի 5134 հոդվածին՝ 33600.0 հազար դրամ,

դ. «Ապարատի պահպանման ծախսեր» նախահաշվի 4729 հոդվածին՝ 2200,0 հազար դրամ:

2) «Ապարատի պահպանման ծախսեր» նախահաշվի 5122 հոդվածից պակասեցնել 49000.0 հազար ՀՀ դրամ, 5134 հոդվածից՝ 1000.0 հազար դրամ: Նշված գումարներից 48000.0 հազար դրամն ավելացնել «Մշակույթի տներ և ակումբներ» նախահաշվի 5122 հոդվածին, 1000,0 հազար դրամը՝ 5129 հոդվածին և 1000,0 հազար դրամը՝ «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 5134 հոդվածին:

3) «Սպորտային միջոցառումների կազմակերպում» նախահաշվի 4269 հոդվածից պակասեցնել 450,0 հազար ՀՀ դրամ և ավելացնել նույն նախահաշվի 4727 հոդվածին:

4) «Ջրամատակարարում և ջրահեռացում» նախահաշվի 4251 հոդվածից պակասեցնել 2500,0 հազար դրամ, «Ապարատի պահպանման ծախսեր» նախահաշվի 4251 հոդվածից պակասեցնել 6000,0 հազար դրամ: Նշված գումարներից 3500.0 հազար դրամն ավելացնել «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 4251 հոդվածին, 5000.0 հազար դրամը՝ «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 4251 հոդվածին:

5) «Ընդհանուր բնույթի» նախահաշվի 4269 հոդվածից պակասեցնել 11000,0 հազար դրամ և ավելացնել «Գյուղատնտեսություն» նախահաշվի 4216 հոդվածին:

6) «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 5122 հոդվածից պակասեցնել 1000,0 հազար դրամ և ավելացնել նույն նախահաշվի 5113 հոդվածին:

7) «Մշակույթի տներ և ակումբներ» նախահաշվի 5132 հոդվածից պակասեցնել 2000.0 հազար դրամ և ավելացնել նույն նախահաշվի 5122 հոդվածին:

8) «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 5112 հոդվածից պակասեցնել 5300.0 հազար դրամ և ավելացնել նույն նախահաշվի 5113 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չեն մասնակցել Հայկ Ալեքսանյանը և Վահագն Դավթյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 202-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՌՆԻԿ ՀԱԿՈԲԻ ԳՐԵՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏՅՈՄ ՔՈՉԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի քաղաքի բնակիչ Գառնիկ Հակոբի Գրեյանի 17.09.2024 թվականի №6338-Ք դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Գառնիկ Հակոբի Գրեյանի համար իրեն սեփականության իրավունքով պատկանող NISSAN PATHFINDER 3.5 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 34OD655, թողարկման տարեթիվը՝ 2002 թ., հզորությունը՝ 280 ձիաուժ, նույնականացման համարը՝ JN8DR09Y43W809555) գույքահարկից կուտակված 179517 (հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր տասնյոթ) դրամ տույժի նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 203-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 24-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու անդամներ Հայկ

Ալեքսանյանի, Տիգրան Ալեքսանյանի, Տարոն Արշակյանի, Հասմիկ Բաղդասարյանի, Հակոբ Բարոյանի, Արա Գասպարյանի, Անդրանիկ Գրիգորյանի, Պապ Դանիելյանի, Օլգա Դավթյանի, Կորյուն Խաչատրյանի, Մեխակ Հակոբյանի, Նաղաշ Հակոբյանի, Անդրանիկ Հարությունյանի, Սվետլանա Հարությունյանի, Մարինա Հովեյանի, Լիանա Հովհաննիսյանի, Կարինե Հովհաննիսյանի, Գոհար Մանուկյանի, Սյուզաննա Մարկարյանի, Անդրանիկ Մովսիսյանի, Սեդրակ Սահակյանի, Արմեն Սեդրակյանի, Լուսինե Վարդանյանի, Հակոբ Վարդանյանի դիմումները՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2024 թվականի համար կատարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու անդամների՝ իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց փոխհատուցում՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 204-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի օրը սահմանել 2025 թվականի փետրվարի 21-ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Հայկ Ալեքսանյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 205-Ա/

Ավագանու անդամներ՝

ՀԱՅԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԱՐՈՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱԿՈԲ ԲԱՐՈՅԱՆ

ԱՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԱՊ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԽԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Սվետլանա Հովհաննիսյանը